Արձանագրություն N 3
Համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/66» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի

ք. Երևան

10 մայիսի 2019թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամաուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Սարգսյան /գնահատող/, Գ.Դալլաքյան /գնահատող/, Վ. Գևորգյան /բացող/, Տ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Բանակցությունների վարման մասին

(Ն. Մամաուլյան)

1.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/66» ծածկագրով գնման ընթացակարգի որոշ չափաբաժինների մասով ընտրված մասնակցին որոշելու նպատակով անցկացվել է գների նվազեցման բանակցություններ:

1.2 Բանակցությունների վարման նիստին մասնակցելու նպատակով ծանուցված մասնակիցները ներկա չեն գտնվել նիստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

3. Գնանշման հարցում ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

((Ն. Մամաուլյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/66» ծածկագրով գնման ընթացակարգի

-2-րդ և 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն:

-6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ն. Մամաուլյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցիներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցիների հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակրգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ն. Մամաուլյան)

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գնման ընթացակարգը 1-ին , 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

-Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ն. Մամաուլյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 14:30-ին Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ն. Մամաուլյան

Անդամներ՝ ---------- Մ. Սարգսյան

---------- Գ.Դալլաքյան

---------- Վ. Գևորգյան

---------- Տ. Պողոսյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան